ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2021թ. թիվ 97-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի Ն 314-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 15.12.2020թ. թիվ 1088- Ա որոշումը և հաշվի առնելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 17.02.2021թ. թիվ 87 և 18.02.2021թ. թիվ 93 գրությունները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 314-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) «Հիվանդանոցային ընդհանուր ծառայություններ» բաժնի «Ընդունարան» մասում՝

ա. հանել հետևյալ՝

Ֆիզիոթերապիայի կաբինետի բուժքույր	2.0
Մերսման կաբինետի բուժքույր	2.0

տողերը:

բ. «Ընդամենը» տողում «43.75» թիվը փոխարինել «39.75» թվով:

2) «Հիվանդանոցային ընդհանուր ծառայություններ» բաժնի «Տեխնիկա-տնտեսական սպասարկման բաժին» մասում՝

ա. «Պահակ» տողից հետո ավելացնել նոր՝

ներքին անվտանգության ծառայության ղեկավար	1.0
ներքին անվտանգության աշխատակից	8.5

տողերը:

բ. «Ընդամենը» տողում «44.0» թիվը փոխարինել «53.5» թվով:

3) «Հիվանդանոցային ստորաբաժանումներ» բաժնի «Վնասվածքաբանական բաժին-վնասվածքաբանական կետ» մասում՝

ա. «Հերթապահ բուժքույր» տողում «4.25» թիվը փոխարինել «8.5» թվով:

բ. «Հերթապահ մայրապետ» տողում «4.25» թիվը փոխարինել «8.5» թվով:
գ. «Ընդամենը» տողում «17.5» թիվը փոխարինել «26.0» թվով:

2. «Վնասվածքաբանական բաժին-վնասվածքաբանական կետ» մասից հետո ավելացնել նոր մաս՝

«Ֆիզոթերապիայի և վերականգնողական բժշկության բաժանմունք»

Բաժանմունքի վարիչ, բժիշկ-ֆիզիոթերապևտ	1.0
Ֆիզիոթերապիայի կաբինետի բուժքույր	2.0
Մերսման կաբինետի բուժքույր	2.0
Ընդամենը	5.0

3. Հավելվածի «Ընդհանուրը» տողում «655.75» թիվը փոխարինել «674.75» թվով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2/22/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք.Վանաձոր